

Մ. ԷՄԻՆԻ ՆԱՄՆԿԸ ԳԷՈՐԳ ԶԱՄԱՆԵՐԴԵԱՆՆԻՆ ¹⁾

Արձակուրդների օրերը վրայ հասնելով պարապմունքներից փոքր ինչ ազատուած կամենում եմ երկու նամակներիդ պատասխանել, սիրելիդ իմ Գէորգ, որոնցից մէկը փետրուարի 19-ից, իսկ միւսը մարտի 19-ից: Դոքա երկուսն էլ մեծ ուրախութիւն պատճառեցին ինձ. — երկար և յամառ լուծութիւնից յետոյ վերջապէս դու խօսեցիր ինձ հաճելի լեզուով: Գո առաջին գրութիւնից նկատում եմ, որ դու լուրջ կերպով զբաղուած ես ազգային պատմութեամբ, որ ինձ չափազանց միտմարում է, որովհետև ինչպէս ես տեսնում եմ ապարդիւն չէ եղել քո անձնատուր լինելը մեր հրեշտակներին, որպիսի ասպարիզում դու մեծ գործ կկատարես քո մտքի զարգացման շնորհիւ: Ամենից առաջ ցանկանում եմ շնորհակալ լինել քեզ, իմ Գէորգ, պատուական ընծայիդ համար. խօսքս քո գտած այն պատմական հատուածի մասին է, որի հետ շտապում ես ծանօթացնել ինձ: Այն ամենը, ինչ որ դու ասում ես նորա բովանդակութեան մասին, համեմատելով այն միւսին ժամանակ և Խորենացու նոյն առարկայի մասին տեղեկութեանց հետ, բոլորովին համաձայն է ճշմարիտ պատմութեանը: Դու այն աստիճան թափանցող ես այս դէպքում, որ ինձ միանգամայն բան չէ մնում աւելացնել քո ասածին: Հայաստանի նախարարութեանց խնդիրը մեր պատմութեան նշանաւոր խնդիրներից մէկն է. ես կարծում եմ, որ այդ խնդրի մշակուելով շատ բան կպարզուի մեր ներքին պատերազմներից: Գոնէ ես այսպէս եմ

¹⁾ Այս նամակը գրուած էր ռուս լեզուով, մենք հրատարակում ենք հայերէն թարգմանութիւնը:

կարծումս եւ յիրաւի, մէկ կողմից ինչ բան է մեր պատմութիւնը. եթէ ոչ անընդհատ ներքին կռիւներ: Հէնց որ մեր թագաւորները և թագուհիները և նոցա հետ գտնուած հայոց նախարարները մի փոքր շունչ են առնում արտաքին թշնամիների յարձակումներից, իսկոյն մէկը միւսի դէմ է ապստամբում: Եւ ուրիշ ինչ պատճառ կարող էր լինել դորան, եթէ ոչ տեղապահութեան խնդիրը: Ես կատարելապէս համաձայն եմ քո կարծիքին Մովսէս Կաղանկատուացու պատմածի վերաբերութեամբ: IX դարու այս մասնագիրը անկասկած պարզ չէր ըմբռնում նախարարական տըների յարաբերութիւնները միմեանց հետ, երբ առաջ էր բերում այնպիսի կողմնակի ապացոյց մեր իշխանների աւագութեան մասին. բայց չնայելով սորան, ոչ մի տեղ այս իրողութիւնը ներկայացուած չէ այնպիսի պայծառ գոյնով և այնպիսի բազմանշանակ կերպով, ինչպէս նորա մօտ: Սիւնեաց Անդովի իշխանի բարկութիւնը, որ նկարագրել է Մովսէսը, օրինակելի մի բան է: Բայց ինչ և իցէ, մէկ կողմը թողնելով այս հարցը, որ շատ կշռադատութեան և խորհրդածութեան կարօտ է, ես դեռ դիմում եմ քո ուղարկած հատուածին, որ մի փոքր արբեր եմ կարդում բեղանից: Ես այստեղ կը ներկայացնեմ՝ քեզ իմ ընթերցուածը, որ հաւանական է բոլորովին անօգուտ չես համարի քեզ համար: Ահաւասիկ, «Սահակայ խնդիր արարեալ 'ի դրան արքունի յԱրտաշեսի թագաւորի զոր 'ի Տիսբոն խաւեցեալ, եթէ ես զվաւանկանն զնամակլանի, ¹⁾ զոր Արտաշի 'ի դիւանին տեսի 'ի քաղոց ամսոյ 'ի Ժէ և վաւսոյ արքայից արքայի և բարերարի. և գիր արարի ես Սահակ կաթողիկոս, թէ որպէս ձեր բարերարութիւնդ հրաման տացէ հայոց ազատաց և տանուաւերանց՝ որպէս յառաջ առ Հայոց ազգին ևս՝ նոյնպէս և 'ի ձերում դիւանի շահ (?) նամակլանին առնել, որ յայսմ հետէ Հայոց ազատաց և տանուաւերանց գահ 'ի յայտ լինէր: նոյնպէս ներսեհ հրամանաւ արքայից արքայի՝ և ես Սահակ Հայոց կաթողիկոս կնքեցաք զգահնամակին և եղաք մատանի զարքայից արքայի և զմերս. և է այսպէս արդարեւ

¹⁾ Շղատաւով տպածները բնագրում կարմիր թանաքով են գրուած:

ձևարիտւոյ Ահա բեզ իմ ընթերցուածը. դա բաւական պարզ է թուում բացի մի բառից—շահ, որ դրուած է ճանաչականին առնելոյ բառերի մօտ: Բայց այստեղ էլ եթէ բնագիրը իմ ձեռքիս լինէր գուցէ ըմբռնէի իմաստը—Այնուհետեւ դու հարցնում ես ինչու են բաց թողնուած մի քանի հզօր նախարարական ցեղեր, ինչպէս օրինակ Մուրացան, Խորխոռունի և ուրիշներ, և այլն: Ինչպէս դու ինքդ իրաւամբ նկատում ես, 69-դ նախարարութիւնը, որ դրուած է քո ցուցակի մէջ, պէտք է Մուրացանը լինի: Այս ցեղը, ինչպէս դու գիտես, Արտաշէս Թագաւորի ժամանակ արբայից յետոյ առաջինն էր հաշուում. եթէ նա կարող էր այդքան հեռաւոր տեղ բռնել, կասկած չկայ ուրեմն, որ Խորխոռունին և ուրիշներն էլ հանգամանքների փոխուելով հեշտութեամբ կարող էին իրանց նախագահութիւնը կորցնել: Մի բանի մասին ես ցաւում եմ, որ նախարարների այս ցուցակը լիակատար չէ—նորա մէջ հետաքրքրական շատ բան կայ, որի վերայ դու անշուշտ արդէն ուշադրութիւն ես դարձրել, այն է. ես առաջին անգամ եմ հանդիպում այս անուններին—«20. Բասենոյ դատաւորն. 60. քաղաքապետն արքունի. 81. Որսապետն արքունի»—ժամանակին ազգային պատմութեան վերաբերեալ ուսումնասիրութիւններիս միջոցին ես առանձին ուշադրութիւն կդարձնեմ քո այս թերթի վերայ և նախարարների ցուցակին թէպէտ և այդ լիակատար չէ: Ես կրկին անգամ շնորհակալութիւն եմ յայտնում քո գեղեցիկ հաղորդագրութեան համար, որ աւելի բան երբ ևիցէ հաստատում է իմ կարծիքը Հայաստանում Տեղապահութեան գոյութեան մասին:

Դառնում եմ քո նամակի երկրորդ մասին, որի մէջ դու աչքի ես անցնում իմ խորհրդածութիւնս: Ես 'ի զուր չը խնդրեցի բեզ քո կարծիքը յայտնել նորա մասին: Ես մեծ բաւականութեամբ կարդացի և վերստին կարդացի այն: Քո նկատողութիւնը այն մասին—թէ ո՞ր չափով մեր վիպական երգերը տեղ են գտել Մովսէս Խորենացու պատմութեան մէջ և ինչ նշանակութիւն ունին նորա այս վերջինիս մօտ, սրամիտ է վերին աստիճանի, այնպէս որ մի ուրիշ անգամ գուցէ ես բոլորովին ընդունէի, եթէ որ այնպէս խորին կերպով համոզուած չլինէի այն բանում, թէ իմ խորհրդածու-

Թեանց մէջ ես դորան վիճելի եմ համարում: Հազիւ թէ մի ուրիշը կարողանայ աւելի հիմնաւոր աւարկութիւն անել քեզանց: Երբ ես կսկսեմ ուսումնասիրել Մովսէս Խորենացու պատմութիւնը, ամբողջութեամբ առաջ կբերեմ քո կարծիքը և այնտեղ եմ նկատողութիւնները կանեմ:

Հոգւով չափ ուրախ եմ ազգային երգերի ժողովածուդ վերջնականապէս աւարտելուդ մասին տեղեկութիւն տալուդ համար: Ի դուր ես ենթադրում, որ ինձ համար ծանր կլինի դորա հրատարակութեանը հսկել. ընդհակառակն, ես խնդրում եմ քեզ, հոգիս, փութով ուղարկել ինձ նորա ձեռագիրը (ի հարկէ գրաքննութիւնից թողյաւարուած) որով շուով պահանջած օրինակների բանակութիւնը, թէ ինչ տեսակ թղթի վերայ պէտք է տպուին այդ երգերը—և ես ճշտութեամբ կկատարեմ քո յանձնարարութիւնը կատարելապէս վստահ լինելով, որ դու գոհ կմնաս իմ ճշտասիրութիւնից: Ցեսնում ես ուրեմն բանն ինչումէ է, իմ Գէորգ, ես կուզենայի, որ այս հրատարակութիւնը իբրեւ առաջինը իւր տեսակի մէջ ըստ կարելոյն շքեղ լինի, իսկ այդ շքեղութեան կարելի է հասնել, այստեղ Մոսկվա հրատարակելով և այն Գօսիեի ապարանում: Միւսինոյն ժամանակ ինձ թւում է, որ եթէ դու որոշես ձեռագիրդ այստեղ ուղարկել, աւելի շուտ նա լոյս կտեսնի, քան եթէ քո ձեռքում մնայ: Դու պակաս դանդաղներից չես, ինչպէս որ քեզ էլ անյայտ չէ:—Այս էլ ասենք, որ ինձ համար ցանկալի էր ինչքան կարելի էր օր առաջ ծանօթացնել գիտնական աշխարհին այս գանձի հետ. ես քո կողմից անմիջապէս մի քանի օրինակ կուղարկէի Փարիզ Դիւլօրիէին, իսկ ինքս մի փոքր սիրուն յօդուած կգրէի այդ երգերի մասին ռուսական ամսագիրներից մէկի մէջ:—Ահա քեզ իմ բոլոր Considerants. ես անհամբերութեամբ կսպասեմ քո շուտափոյթ պատասխանին:

Մնամ քո էՄԻՆ

Մոսկվա 2 ապրիլի 1851.

1) Նասակի վերջին մասը, իբրեւ ընտանեկան ընտանոթիւն ունեցող, անյարմար դատեցինք հրատարակել: